խրկէ, գաւառաց վրայ կարգադրութիւններ կ՚ընէ, զօրավարաց խրկած տեղեկութիւնները կ՚ընդունի, անոնց համար ըլլալու յաղթական հանդէսները կը սահմանէ, հիւպատոսներուն կը հրամայէ վտանգի ժամանակ զօրք ժողվելու, և ամէն արտաքոյ կարգի գաւառու դատաւորները ինքը կ՚անուանէ։ Այն այս ծերակոյտը իր հաստատութենէն ՚ի վեր Հռոմայ գաբիրային սեպուած է, և նոյն իսկ ամենէն սաստիկ նախանձոտներէն յարգուած։ Ժողովուրդը սովոր է զայն կոչելու տաճար սրբութեան, բագին ազգաց, յոյս և ապաւէն ամենայն ազանց։ Նոյնպէս ծերակուտին անդամներուն Հայր անունը կու տայ, իսկ օտարականք Տէրք կ՚անուանեն զանոնք։

Կր. շարունակուի։

ԾԱՂԿԱՔԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Բանտը։

Աղէ դարձո զամ մի զաչս ՚ի տխրազգած որմունսն, յորում մարդոյս ազատութիւն ՚ի ծանրաբեռն յերկաթս կաշկանդեալ, յորում անմեղութիւն է երբեք զի խառնակի ընդ եղեռան, յորում և յառաջ քան զվերջինն ընդ ամենայն անցանեն պատիժս պատուհասից. մատիր, և թէ երբէք շղթայիցն խռովլ ահաւոր, եթէ խաւարն ահարկու, և հեծութիւնք խուլ և խորին՝ ոչ զսիրտ քո պաղեալ սառուցանեն կամ յետս զքեզ թէ ոչ սոսկումն վարեսցէ, մուտ ՚ի ցաւոց օթևանս նոցա, պնդեա զքեզ առ սուղ ինչ վայրկեան իջանել յայն սեաւ զնդան զոր չետես երբէք լոյս արփենւոյ, և յայն խաթարեալ կերպարանս՝ ծանիր զպատկերակիցսդ, ՚ի շղթայիցն ձմլեալք, ՚ի ծուէնս ինչ զկէս մարմնոյն ծածկեալ, ժահահոտք յանփոփոխ օդոյն և թուլին զթոյն եղերանն կլանել, և որդանցն, որ զգէշս ՚ի գերեզմանի սպառեն, կեր լինին կենդանւոյն. սակաւիկ ինչ և անախորժ պաշտի նոցա կերակուր. պակնուն սրտաբեկ ՚ի նմանավիշտ ընկերացն աղխտից և ՚ի սպառնալեաց անագորոյն պահապանին. ակնկալութիւն զնոսա ահաբեկէ մանաւանդ քան երկիւղ պատուհասիցն. այսպէս մշտատանջ զմահ կոչեն ինքեանց ձեռնտու, զքաղցրագոյնն քան զայն կեանս ողորմելի։

Թէ են արդ եղեռնաւոր, սակայն և այնպէս գթութեան են արժանիք, և դատաւոր անարդար է դանդաղեալն ՚ի դատել զնոսա։ Պատուհաս կապեցին օրէնք ՚ի վրէժ յանցանաց և ՚ի հատուցումն ազգի մարդկան. այլ դժնդակ բանտին տանջանացն երկարութի ծանրաբեռնէ կրկին զաղէտս յանցաւորին, և եղծանին օրէնք՝ եթէ ըստ չափ անցանեն. անիրաւութիւն մեծեղեան առ յանցաւորն և առ մարդկութիւն միանգամայն, թող զի մէն մի վայրկեանք ՚ի բանտի անդ ծախեալք կորնչին անպէտք յօրինակ բարուց։

Այլ անմեղ թէ արդ իցեն, ո՛վ ցաւք, ո՛վ գորովք, մարդկութիւն առ այս կոծ ահաւոր և աղէկէզ ամբառնայ ՚ի խորոց սրտէ. Առ իմէ մարդ յազատութի ծնեալ՝ ընդ բեռամբ հեծէ շղթայից. հազիւ ՚ի բանտ խաւարչտին ընչէ այրն՝ ում երկինք պարգևեցին զօդ և զլոյս եթերին, քարշեալ բռնի ՚ի գրկաց ամուսնոյն և որդւոց հայրն տանուտէր։ Ցաւք, անյուսութիւն և քաղց պատեն զանդորր բնակութեամբ նորա. ձեռքն այն՝ որով զսիրելեաւն փարէր և ընդգրկէր զյոյսն դեռածին, ձեռքն՝ որ զկեանս նոցա հայթհայթէր, որ սերմանէրն և հնձէր, ձեռքն այնոքիկ առ աշխարհն պիտանիք, ՚ի շղթայս կան պարաւանդք յանիրաւի. այն սիրտ անարատ և անստգիւտ գնի ՚ի վայր պղծեալ ՚ի խղճէ մտաց. համառօտ՝ անմեղութիւն հեծէ յօթևանս եղերանց։ Անդ՝ զկենաց մարդկան նա ինքն լայ ողորմագին զթըշուառ պայման. անդ՝ յառեալ զաչս ՚ի Նախախնամութիւնն վերին, արձակէ դառն հառաչանս. Օ՛ բաղդ քոյին, ո՛վ մարդ, թէ գիտիցես. վիշտք և մահ, սոքին են քոյոյ կենացդ ասպարիզի թիրախք կրկին մեծամեծ։

ՍԵՐՎԱՆ